ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 282-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի N 15-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2018 թվականի չորրորդ եռամսյակում* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության լիազոր մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո երեքաշխատանքային օրվա ընթացքում,

իրավական և մասնագիտական հսկողության Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018 թվականի սեպտեմբերի 27
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 282-Ա որոշման

2018 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ընթացակարգերը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

Հ/Հ	Համայնք անվանումը	Ժամանակահատվածը	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ընթացակարգը	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոնը (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Ազգանունը, անունը
1	2	3	4	5	6
1	Ակունք	մայիս 2015-հոկտեմբեր 2018	1. Արտակարգ իրավիճակների բնագավառ 2. Առևտրի և ծառայությունների բնագավառ 3. Բնապահպանության բնագավառ 4. Ընդերքօգտագործման բնագավառ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 6. Հողօգտագործման բնագավառ 7. Կրթության բնագավառ 8. Մշակույթի բնագավառ 9. Պաշտպանության բնագավառ 10. Սոցիալական պաշտպանության բնագավառ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 12. Տրանսպորտի և կապի բնագավառ 13. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության բնագավառ 15. Քաղաքաշինության բնագավառ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	ղեկավար՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ անդամներ՝ 1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ 2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ 3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ 4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ 5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ 6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ 7. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ 8. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ	*Ակերսանյան Հարություն* *Թումոյան Ռոբերտ* *Գոյլան Գրիգոր* *Բաղդասարյան Սերգա* *Բունիաթյան Կամո* *Վարդանյան Արմեն* *Ավետիսյան Եղիշե* *Թումոյան Կամո* *Արտաշյան Շավարշ*

2	*Եղվարդ*	*օգոստոս 2015-նոյեմբեր 2018*	1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառ 2. Արտակարգ իրավիճակների բնագավառ 3. Առևտրի և ծառայությունների բնագավառ 4. Բնապահպանության բնագավառ 5. Ընդերքօգտագործման բնագավառ 6. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 7. Հողօգտագործման բնագավառ 8. Կրթության բնագավառ 9. Մշակույթի բնագավառ 10. Պաշտպանության բնագավառ 11. Սոցիալական պաշտպանության բնագավառ 12. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 13. Տրանսպորտի և կապի բնագավառ 14. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 15. Առողջապահության բնագավառ 16. Քաղաքաշինության բնագավառ 17. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ		